լիս այդ կամավոր տուրքը ներկայացնելուց։ Այս հողի վրա նրանց և կալվածատերերի միջև ծագում էին մեծ տարաձայնություններ, որոնք հետզհետե խորանալով՝ փոխվեցին նաև այլ տուրքերը կալվածատիրոջը վճարելու մերժումին։ Այս ընդհարումները ստացան այնպիսի սրություն, որ Գանձակի նահանգական իշխանությունը հարկադրված էր միջամտել, սակայն գավառապետը պահեց կալվածատիրոջ կողմը, գյուղական բողոքի գլխավորները ձերբակալվեցին և գանակոծվեցին։ Շարժումն այսպիսով շիջեց։ Կապանի Մելիք-Փարսադանյանները շատ ուշ դադարեցին իրենց Բեխ գյուղի տակով անցնող գրաստներից և տավարից ճանապարհի տուրք—դաշ փուլի՝ դրամ պահանջել։

Սակայն 1846 թ. օրենքը այն դրական մեծ նշանակությունն ունեցավ, որ ազնվականները պիտի շտապեին ապացուցել իրենց հողատիրական իրավունքները և ճշտեին իրենց կալվածքների սահմանները, ինչպես և իրենց դասակարգային պատկանելությունը։ Դա կայունություն էր մտցնում բնակչության տեղաբաշխման մեջ, որոշ սահմանների մեջ էր դնում բեկական ֆօշlor տնտեսությունները, կապում էր ձմեռանոցները մշտական տեղանքների-բնակավայրերի հետ և նպաստում էր նրանց գյուղայնացմանը։

Մելիքներն ու բեկերը իրենց հողատիրական իրավունքները ճանաչել տալու և հաստատելու համար պետք է ապացուցեին՝

1. Որ այդ իրավունքները վայելում էին տվյալ գյուղում կամ տվյալ հողի վրա այն ժամանակ, երբ խանական իշխանությունը փոխվել էր ռուսական կառավարության։

2. Որ այդ իրավունքներից անվիճելիորեն օգտվել են մինչև ներկա ժամանակը.

3. Որ իրենց ցույց տված հողերի սահմանները անվիճելի են։ Որպես փաստեր կարող էին ծառայել 1823 թ. կազմված ցուցակագրությունը, ոստիկանական տեղեկանքները, տեղական բնակիչների և հարևանների ցուցմունքները[14]։

Եթե հայ ազնվականները կարողանում էին դյուրությամբ իրենց ձեռքի տակ եղած վավերագրիներով ներկայացնել պահանջված ապացույցները, նույնը դյուրին չէր թրքական ազնվականների համար, որոնց տրամադրության տակ չկային նման վավերագիրներ։ Թե ինչպիսի միջոցների (մանավանդ կեղծ վկայությունների) էին դիմում նրանք այդ իրավունքները հաստատելու համար, մեջ է բերում Ստ. Զելինսկին իր հետազոտական աշխատության մեջ[15]։ Այդ միջոցները շատ բնորոշ են XX դ. վերջերին Զանգեզուրում տիրող կենցաղի համար։

Այս իրադրությունից առանձնապես շահվեց թրքական հողատիրությունը նաև Զանգեզուրում, ինչպես և այլ նախկին խանություններում։ Շատ դեպքերում ձմեռանոցները ճանաչվեցին հիմնադիր և երկար տարիներ նրանց եկամուտներից օգտվող առաջնորդների սեփականությունը։ Այսպես օրինակ՝ Ջագիևները տեր ճանաչվեցին Ողջի գյուղի հողերի, նույնպես կարողացան կալվածքներ ձեռք բերել Դավիթ-բեկում (Զեյվայում), Ջորաստանում (Խլաթաղում) և այլ վայրերում։ Շահվեց մասնավորապես և Տաթևի վանքը, որի կալվածքների մի մասը պարսկական կառավարության ժամանակ բռնի անցել

[14] Иваненко В. Н., նշված աշխ., էջ 368—369։

[15] Նշված աշխ., էջ 35 և հաջորդ։